ղորդ ապօրինի կնոջը, քննութեամբ պարզել, թէ ո՞ր քահանան է պսակել նորան այդ ապօրինի կնոջ հետ և ենթարկել օրինական պատասխանատուութեան, իսկ եկեղեցական ապաշխարանքի ենթարկել Աբրահամ Կարապետեանին՝ նորա տգեղ և ապօրինի արարքի համար։ 31 մայիսի, թ. 1164։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Արմաւիր քաղաքի կրօնուսոյց Արսէն քահանայ Հալաճեանի անունով, որով, համաձայն Կուբանեան շրջանի պետական դպրոցների 3-րդ մասի Տեսչի միջնորդութեան, Կամիլաւկա գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 26 մայիսի, թ. 1141։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 20-ի, թ. 1087, կոնդակը, որոշեց. նախ՝ պատուիրել Տ. Բագրատ եպիսկոպոսին գնալ իւր նոր պաշտօնատեղին, ընդունել Շամախու Կոնսիստորիայի Ատեանում օրինասահման երդումն և ստանալ Կոնսիստորիայից ցուցակով Առաջնորդական գործերն ու գոյքը և վարել Առաջնորդական պաշտօնը. այդ մասին հրաման տալ յիշեալ Կոնսիստորիային, պատուիրելով վճարել նոր Առաջնորդին ռոճիկ շտատով, սկսած Բարձրագոյն հրամանի օրից և ճանապարհածախք վիճակային արդիւնքից, համաձայն 1913 թ. յուլիսի 8-ի, թ. 1481, շրջաբերականի Ա. հատուածի ա. և բ. կէտերի. երկրորդ՝ պատուիրել Տ. Վահան վարդապետ Տէր Գրիգորեանին յանձնելով ցուցակով Տաթևի փոխանորդական գործերը և գոյքը Հոգևոր Կառավարութեան՝ գնալ իւր նոր պաշտօնատեղին և ստանձնել ու վարել Ղարաբաղի թեմի Ժամ. Կառավարչի պաշտօնը, ստանալով ցուցակով

Առաջնորդական գործերը և գոյքը. այդ մասին հրաման տալով Տ. Զաւէն վարդապետին և Ղարաբաղի Կոնսիստորիային՝ պատուիրելով առաջնին գործերը և գոյքը յանձնել ցուցակով Կոնսիստորիային և դալ Ս. Էջմիածին, իսկ Կոնսիստորիային՝ կարճել Տ. Զաւէն վարդապետի ռոճիկը պաշտօնը յանձնելու օրից և տալ ռոճիկ թեմի նոր ժամ. Կառավարչին Բարձրագոյն հրամանի օրից՝ անցած ապրիլի 30-ից, և ճանապարհածախք համաձայն 1913 թ. յուլիսի 8-ի, թ. 1481 շրջաբերականի Ա. հատուածի ա. և բ. կէտերի. Տաթևի փոխանորդի նոր պաշտօն ստանալու մասին տեղեկութիւն տալ Երևանի Կոնսիստորիային, պատուիրելով կարգադրել կարճել նորա փոխանորդական ռոճիկն անցած ապրիլի 30-ից. երրորդ՝ հրաւիրել Տ. Տիրայր վարդապետին ստանձնել և վարել Սինոդի անդամութեան պաշտօն, ընդունելով օրինասահման կարգով երդուն, չորրորդ՝ պատուիրել Նոր-Նախիջևանի Փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ Զէորէքչեանին յանձնելով փոխանորդական գործերը և գոյքը Հոգևոր Կառավարութեան՝ դալ Ս. Էջմիածին և ստանձնել Սինոդի անդամութեան պաշտօն. այդ մասին տեղեկութիւն տալ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային, պատուիրելով կարգադրել կարճել Տ. Գէորգ վարդապետի ռոճիկը պաշտօնը յանձնելու օրից և հինգերորդ՝ պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին կարճել Տ. Բագրատ եպիսկոպոսի ռոճիկը անցած ապրիլի 30-ից, տալ ճանապարհածախք Տ. Զաւէն վարդապետին Շուշուց Ս. Էջմիածին և Տ. Գէորգ վարդապետին Նոր-Նախիջևանից Ս. Էջմիածին, համաձայն Սինոդի 1913 թ. յուլիսի 8-ի շրջաբերականի, առաջնին Գ. հատուածի ա. և բ. կէտերի չափով, իսկ երկրորդին՝ Տ. Զաւէն վարդապետին՝ Ա. հատուածի ա. և բ. կէտերի չափով, և միայն Սինոդի անդամութեան ռոճիկ՝ Տ. Տիրայր և Տ. Գէորգ վարդապետներին՝ առաջնին անցած ապրիլի 30-ից և երկրորդին՝ Նոր-Նախիջևանի փոխանորդի պաշտօնը յանձնելու օրից։ 23 մայիսի, թ. 284։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի 1915 թ. դեկտ. 31-ի, թ. 6468, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Գանձակի գաւառի Արմաւիր գիւղի բնակիչ Գրիգոր Ազարեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Ազարեանին քահանայ նոյն գիւղի վրայ։ 30 մայիսի, թ. 289։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի մայիսի 21-ի, թ. 1773 յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Կարսի Հոգևոր Կառավարութեան վարձել այս մայիսի 1-ից ևս մի գրագիր ամսական երեսուն ռուբլով ու վարել Հոգևոր Կառավարութեան գործերն երկու գրագրով։ 30 մայիսի, թ. 291։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 25-ի, թ. 1121, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան, պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել դպրոցական դրամագլխի տոկոսներից, Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով, Զխարի գիւղի ծխական դպրոցին իբրև միանուագ նպաստ 300 ռուբլի։ 30 մայիսի, թ. 292։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ մայիսի 26-ի, թ. 1138, մակագրական պատուէրը, որոշեց. պատուիրել Ատրպատականի Կոնսիստորիային տալ իւր Ատենադպիր Աղէքսանդր Սանոյեանին վիճակային արդիւնքից միանուագ նպաստ 200 ռուբլի։ 1 յունիսի, թ. 298։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 27-ի, թ. 1146, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան, պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել, Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով, Սուլտա գիւղի ծխական դպրոցին, դպրոցական դրամագլխի տոկոսներից, իբրև միանուագ նպաստ 300 ռուբլի՝ դպրոցական շէնքի կիսատն աւարտելու համար։ 1 յուն., թ. 300։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի 1914

Թ. փետրուար 28-ի, Թ. 970, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Տփխիսի բնակիչ Մկրտիչ Յովհաննիսեանին և առաջադրել թեմի Տ. Առաջնորդին ձեռնադրել ընծայացուին քահանայ Ախալսոփի և կից գիւղերի վրայ։ 3 յունիսի, Թ. 304։

Սինոդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի 1916 Թ. յունուարի 30-ի, Թ. 300, յայտարութիւնն, որոշեց. շրջաբերականով դիմել թեմական կոնսիստորիաներին տալ փախստական դաղթականներին, նոցա խնդրի համաձայն, ծննդական վկայականներ, հիմնուելով որպէս երդմնական քննութեան վրայ, առնուազն երեք համատեղացու և ըստ հնարաւորութեան ծխատէր քահանայի և կնքահօր ցուցումներով, նմանապէս և բժշկական վկայականի վրայ, որ պարտաւոր է ներկայացնել խնդրատուն ըստ արտաքինի իւր տարիքն որոշելու մասին։ 3 յունիսի, Թ. 305։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 1-ի, Թ. 1165, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին բանալ 5000 ռ. վարկ Էջմիածնի Տպարանի Վարչութեան անունով-հարկաւոր քանակութեամբ թուղթ գնելու համար։ 3 յունիսի, Թ. 306։

Սինոդը՝ լսելով Շամախու Կոնսիստորիայի անդամ Յովհաննէս քահանայ Նաջարեանի այս տարուայ փետ. 29-ի յայտարարութիւնը, որոշեց. պատուիրել Շամախու Կոնսիստորիային տալ վիճակային արդիւնքից Նաջարեան քահանային նորա մի տարի եօթ ամիս պաշտօնավարութեան համար մի հարիւր իններսուն (190) ռուբլի, սկսած իւր պաշտօնավարութեան սկզբից և շարունակել այսուհետև ևս քանի անդամ է։ 10 յունիսի, Թ. 326։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան Յունիսի 9-ի, Թ. 1241, մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձա-

պահին վարկ բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով պետական նպաստի գումարից քառասուն վեց հազար ութ հարիւր տասն և երկու ռուբլու (46812 ռ.)։ 13 յունիսի թ. 330։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբութեան Ցունիսի 6-ի, թ. 1207, մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին փոխադրել կամաւորների գումարից Տփխիսի Ազգային Բիւրոյի անունով տասն հազար (10,000) ռուբլի։ 13 յունիսի, թ. 331։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբութեան Ցունիսի 9-ի, թ. 1243, մակագրութիւնը, որոշեց համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին բանալ վարկ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով երեսուն և ութ հազար եօթ հարիւր երեսուն երեք ռուբլի և 40 կոպ. (38733 ռ. 40 կոպ.) 13 յունիսի, թ. 332։

Մինոգը՝ լսելով Կովկասի Տ. Փոխարքայի այս տարուայ մայիսի 31-ի, թ. 17433 գրութիւնն, որոշեց. պատուիրել Աստրախանի Կոնսիստորիային կարգադրել ընդունել Մոյսէյ Լէյրովա Զէյդմանին Հայաստանեայց եկեղեցու ծոցը։ 13 յունիսի, թ. 333։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբութեան մարտի 31-ի, թ. 740, մակագրութիւնն, որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել թեմի Մազկաձորի շրջանի Ցառուխ գիւղի բնակիչ Բագրատ Տէր Սարգսեանին և առաջադրել թեմի Փոխ-թեմական ձեռնադրել յիշեալ ընծայացուին սարկաւագ՝ ընդունելով Սեւանի միաբանների շարքը։ 13 յունիսի, թ. 334։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 6-ի թ. 1204, կոնդակը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին նախ՝ վճարել այս յունիսի մէկից ռոճիկ Գիւտ աբեղային, որպէս անպաշտօն վարդապետի, ամսական երեսուն ռուբլի, և Ղևոնդ աբեղային, որպէս ուղղաբակի

կառավարչի՝ ամսական քառասուն ռուբլի, իսկ սննդադրամ իւրաքանչիւրին քսանական ռուբլի և երկրորդ՝ հաստատելով յիշեալ նորընծաների ձեռնադրութեան վերկայականները՝ յանձնել նոցա։ 15 յունիսի, թ. 340։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 15-ի, թ. 1273 կոնդակը—Նորին Վեհափառութեան նոյն ամսի 25-ին Տփխիս գնալու մասին, որոշեց. նախ՝ Վեհափառ Հայրապետի մտադրութեան մասին յայտնելով Վրաստանի Տ. Առաջնորդին, պատուիրել հոգ տանել Առաջնորդարանում Նորին Սրբութեան պատշաճ ընդունելութեան մասին, երկրորդ՝ ներկայ ամսի 20-ին հեռագրով յայտնել Կովկասի Փոխարքայի Դիւանատան, թէ Նորին Սրբութիւնը մտադիր է մեկնել Ս. Էջմիածնից յունիսի 25-ին և լինել Տփխիսում 26-ին, երրորդ՝ պատուիրել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային տալ Նորին Սրբութեան կանխագոյն պատուէրի համաձայն Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետին կարևոր ծախքերի համար գումար, որչափ պէտք լինի, չորրորդ՝ Նորին Սրբութեան Ս. Էջմիածնից բացակայ լինելու ժամանակ Ատեանի օրագրական վճիռները կայացնել ատորագրութեամբ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի, որպէս նախագահողի և հինգերորդ՝ որովհետև Նորին Սրբութեան ուղեկցում է Սինոդի Անդամ և Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետն, ուստի համարել Նորին Բարձրապատուութեանը բացակայ այս ամսուայ յունիսի 25-ից մինչև վերադարձը։ 15 յունիսի, թ. 341։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 8-ի, թ. 1230, մակագրութիւնը, որոշեց. պատուիրել Բեսարաբիայի Կոնսիստորիային տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Ատենադպրին, երկու գրագրերին 100-ական և տրամադրելի ծառաներին 60 ռուբլի։ 17 յունիսի, թ. 345։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 6-ի թ. 1206, մակագրութիւնը, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային տալ վիճակային արդիւնքներից միանուագ

նպաստ Աղեքսանդրապոլի Հոգևոր Կառավարության քարտուղարին 100 և գրագրերին՝ 50-ական ռուբլի։ 17 յունիսի, թ. 346։

Մինոգը՝ լսելով Նորին սրբության յունիսի 16-ի, թ. 1301, մակագրությունն, որոնց. արձակված համարել Տ. Թադէոս վարդապետին Տպարանի Վարչության անդամության պաշտոնից և ճանաչել նորա փոխարէն Տ. Գիւտ աբեղային, որին համարել նաև «Արարատ»-ի խմբագիր։ Պատուիրել Մինոգիս Գանձապահին տալ Տ. Գիւտ աբեղային առաջիկայ յուլիսի 1-ից յաւելեալ ռոճիկ, ամսական ընդամենը 40 ռուբլի։ 17 յունիսի, թ. 347։

Մինոգը՝ աչքի առաջ ունենալով Վանական Կառավարության մի շարք անկանոն գործողություններն ի վնաս Մայր Աթոռի շահերի, որոնց. նկատողություն ենթարկել Վանական Կառավարության կազմին, որի մասին և յայտարարություամբ զեկուցանել Նորին Վեհափառության, 17 յունիսի, թ. 348։

Մինոգը՝ լսելով Զանգուի առու հանող Ցանձնաժողովի Նախագահ Տ. Մատթէոս Եպ-ի յունիսի 20-ի, թ. 271, յայտարարությունը, որոնց. պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին բանալ Տ. Մատթէոս Եպ-ի անունով տասն հազար ռուբլու վարկ։ Վճռիս մասին յայտնել Վաղարշապատ, Ալիբեկլու և Զորանքեարա գիւղերի հաւատարմատարերին, համաձայն պայմանի 4-րդ կէտի, իւրեանց բաժին դրամը ժամանակին վճարելու համար։ 22 յունիսի, թ. 365։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբության յունիսի 21-ի, թ. 1340, մակագրությունը, որոնց. համաձայն Նորին Վեհափառության մակագրության պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին մի հազար չորս հարիւր քսան և եօթ ռ. 32 կ. յանձնել Երևանում ապրող տ. Նուարդ Պասմաճեանին։ 22 յունիսի, թ. 360։

Մինոգը՝ լսելով Նորին Սրբության յունիսի 15-ի, թ.

1280, մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Երևանի Կոնսիստորիային տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Տաթևի Հոգ. Կառավարութեան քարտուղարին երկու հարիւր և դրագրին մի հարիւր ռուբլի։ 20 յունիսի, թ. 353։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 13-ի, թ. 1259, կոնդակն, որոշեց. ճանաչել Մ. Աթոռի կալուածների յետ գնման Ցանձնաժողովի անդամներ Տ. Գէորգ վարդապետին և Գիւտ աբեղային։ 20 յունիսի, թ. 350։

Սինոդը՝ լսելով Շամախու Կոնսիստորիայի անցած մայիսի, 27-ի, թ. 1251, յայտարարութիւնն, որով ներկայացրել էր իւր 1915թ. դրամական մատեաններն գնելու, որոշեց. կանոնաւոր ճանաչել Շամախու Կոնսիստորիայի 1915 թ. ել և մտից հաշիւները։ 20 յունիսի, թ. 352։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 8-ի, թ. 1238, մակագրութիւնն, որոշեց. ի հրահանգութիւն ունենալ քահանաների տեղափոխութեան համար Վեհափառ Կաթուղիկոսի թ. 1238 մակագրութիւնն, որով թոյլ է տրուում քահանաների փոխադրութիւնը միայն յարգելի պատճառներով և այն դէպքում երբ թեմական իշխանութիւնները համաձայն կլինեն, հեռացողի և ընդունողի առաջնորդների նախօրօք բանակցութեամբ, ծխականների համաձայնութեամբ, որից մէկը պիտի արձակէ հովուութիւնից, իսկ միւսն ընդունէ պատշաճ համախօսականով այլ և ի նկատի ունենալով, որ կրթական ցեղը համապատասխանի այն նոր պաշտօնավայրին, ուր տեղափոխուում է։ 20 յունիսի, թ. 354։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1913 թ. նոյեմբերի 5-ի, թ. 7715, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Երևանի գաւառի Աղազօր գիւղի բնակիչ Խաչատուր Տ. Յակոբեանին և առաջադրել թեմի Փոխ-թեմա-

կալին ձեռնադրել յիշեալ Տէր Յակովբեանին քահանայ Նոր Աղազօր գիւղի վրայ։ 20 յունիսի։ Թ. 355։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1915 թ. դեկտեմբերի 31-ի, թ. 7405, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Կարսի շրջանի Մազրա գիւղի բնակիչ Աշոտ Տէր Խաչատրեանին քահանայ նոյն վիճակի Նորաշէն գիւղի վրայ։ 20 յունիսի։ Թ. 356։

Սինոդը՝ լսելով Աստրախանի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 29-ի թ. թ. 1107 և 1108 յայտարարութիւններն, որով ներկայացրել է 1915 թ. դրամական ել և մտից մատեաններն, որոշեց. ընդունելի համարել Աստրախանի Կոնսիստորիայի 1915 թ. ել և մտից հաշիւները։ 22 յունիսի։ Թ. 358։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան յայտարարութիւնը, որով մատուցանում է նոյն դպրոցի 1915/16 ուս. տարուայ նախահաշիւն ի հաստատութիւն, որոշեց. հաստատել Ղարաբաղի Թեմական Դպրանոցի 1915/16 ուսում. տարուայ նախահաշիւը, պատուիրելով պակասորդ մնացած 2075 ռ. լրացնել այլ աղբիւրից։ Նաև պատուիրել Հոգաբարձութեան նախահաշիւ կազմելիս մուտքի մէջ մտցնել այնպիսի դրական աղբիւրներ, որոնց եկամուտը թէական չէ։ 22 յունիսի։ Թ. 361։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 2-ի, թ. 1509. յայտարարութիւն, որով մատուցել է Սինոդիս գննութեանն իւր 1915 թ. դրամական մատեաններն, որոշեց. ընդունելի համարել Վրաստանի Կոնսիստորիայի 1915 թ. ել և մտից հաշիւները և այս գործը կարճել։ 22 յունիսի։ Թ. 359։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 21-ի, թ. 1341, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի

Գանձապահին բանալ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, գաղթականների գումարից վաթսուն հազար ռուբլու (60,000 ռ.) վարկ, ընթացիկ ծախքերի համար։ 24 յունիսի, թ. 367։

Մինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի յունիսի 15-ի, թ. 2223, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային կարգադրել ընդունել Թրքուհի Սուլթան Շաքրի-Բէկեանին Հայաստանեայց եկեղեցու դիրկը։ 27 յունիսի, թ. 368։

Մինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի յունիսի 17-ի, թ. 2305, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Կոնսիստորիային տալ միայն այս տարի Նոր-Բայազէտի գործակալ Ռուբէն վարդապետին միանուագ նպաստ երկու հարիւր ռուբլի։ 27 յունիսի, թ. 370։

Մինօդը՝ լսելով Նորին Սրբութեան յունիսի 23-ի, թ. 1359 մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան թոյլ տալ Վրաստանի Կոնսիստորիային տալ վիճակային արդիւնքից միանուագ նպաստ Ախալցխայի Հոգ. Կառավարութեան քարտուղարին 200, գրագրին՝ 150 և ծառային՝ 100 ռուբլի։ 27 յունիսի, թ. 375։